ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՀՈՒՆԻՍԻ
2025 թ.
№ 10 (1147)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Գալիք փոխակերպումներին ընդառաջ, երբ արժեհամակարգերի քաոս է

Այս օրերին տարբեր երկրներում և Հայաստանում նշում են Հայկազյան համալսարանի ստեղծման 70-ամյակը. այդ համատեքստում Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ «Հայութեան տեղաշարժերը և փոխակերպումները 20-րդ դարուն և 21-րդ դարու սկզբին» գիտաժողովների հոդվածների ժողովածուի շնորհանդեսը:

Բեյրութի Հայկազյան և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանների միջև 2021 թվականին ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակում 2022 և 2023 թվականներին կազմակերպվել են համատեղ գիտաժողովներ Երևանում՝ Մանկավարժական համալսարանում, և Լիբանանում՝ Հայկազյան համալսարանում:

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը և Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը սկզբունքորեն ընտրել են մի թեմա, որը «ոչ միայն յուրահատուկ էր իր վերնագրով ու բովանդակությամբ, այլև յուրահատուկ էր մեր ժողովրդի պատմության, սոցիալական-քաղաքական ներկա վիճակի առումով», ինչպես ընդգծեց ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանյանը: Պրոֆեսորը նշեց, որ հայ ժողովրդի պատմությունը որոշ առումով տեղաշարժերի պատմություն է, և հայերի տեղաշարժերը, գաղութների ձևավորումն ու սփյուռքի առաջացումը տարատեսակ քննարկումների և գնահատականների է արժանացել պատմագիտության կողմից: Ահա ինչու որոշել են ուսումնասիրել այդ տեղաշարժերի հետևանքները լեզվական, քաղաքական և այլ փոխակերպումների տեսանկյունից: Գիտաժողովի կազմակերպիչները վստահ են՝ գիտաժողովում բարձրացված թեման կիրառական նշանակություն կունենա թե՛ գիտնականների, թե՛ նյութը հետազոտողների, թե հայության տեղաշարժերով զբաղվող պատկան մարմինների համար:

Վերոհիշյալ ժողովածուում զետեղվել է երկու գիտաժողովների 40 մասնակիցների հոդվածների ընտրանին, որտեղ ներկայացված են տեղաշարժերը և փոխակերպումները Վրաստանում, Իրանում, Սիրիայում, Ջմյուռնիայում, Հայաստանում, քննության ենթարկվել քաղաքական, տնտեսական, ազգագրական, լեզվաբանական ու մշակութային տեսանկյուններից:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհանդեսին մասնակցելու համար շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ վերապատվելի Փոլ Հայտոսթյանին, Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի ղեկավար դոկտոր Անդրանիկ Դաքեսյանին, Բեյրութի Հայկազյան համալսարանի հոգաբարձուների ատենապետ Հասմիկ Բարանին և փոխատենապետ Ջոն Սավարյանին:

«Հայության տեղաշարժերով պայմանավորված հասարակական-քաղաքական փոխակերպումները գնալով ավելի են հետաքրքրում գիտական շրջանակներին, և զուգահեռ քննարկվող հարցերի շրջանակը ոչ միայն ակադեմիա-

➤2

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ–150

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դո՛ւ, հինավուրց ի՛մ Հայաստան,
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՛մ Հայաստան,
Դո՛ւ, ալևոր տեսիլների աստեղազօծ ի՛մ Հայաստան,
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք, ի՛մ Հայաստան:
Սաղավարտներ դրած կանգնած քո լեռներդ կուռ երկաթի,
Արորներդ արյունազանգ՝ արդարության ցորեն արտի.
Երդիկներիդ ծուխերն անուշ՝ նվիրական Նավասարդի,
Հին օրերի երգ սրբազան, սեղան զոհի, ի՛մ Հայաստան:
Քո գետերդ՝ տեգ սուրացող, ազատատենչ, կամուրջ քանդող,
Քաղաքներիդ մոխիրներից ծլած վարդերն արյուն-բուրող.
Շարականներդ՝ հոգեբուխ, շինականիդ երգը՝ լացող.
Հին սերերի, նոր կարոտի ոսկի բամբիռ, ի՛մ Հայաստան:
Դստրիկներդ քո փափկասուն՝ անապատի գայլերին կեր,
Որբուկներդ՝ մերկ ու ծարավ. սովալլուկ, մահի ընկեր.
Բախտիդ վրա՝ ծափ ու ծիծաղ, սփոփանքի ունայն խոսքեր,
Նոր հույսերի, նոր երգերի երազաբույր ի՛մ Հայաստան:
Բարեկամներից վաճառված, անիրավված ի՛մ հայրենիք,
Ոսոխներիդ կրունկի տակ ավերակված ո՛րբ հայրենիք,
Սարսափներով, եղեռններով հավերժացած հի՛ն հայրենիք,
Արյունիդ մեջ սուրբ իրավունք, հոգիդ արև, ի՛մ Հայաստան:
Կռունկներդ համբավ տանող՝ պանդուխտներիդ աշխարհալած,
Նահատակված տաճարներիդ գմբեթները երկնասլաց,
Մագաղաթներդ արյունաներկ՝ ձայն հեծության, հառաչանաց,
Հնուց ուխտի վկայական, ավանդատուն, ի՛մ Հայաստան:
Ծիրանավոր քաջ-Մասիսդ՝ սպարապետ քեզ պահապան,
Ծերուկներըդ՝ ճակատագրիդ ճամփաների սուրբ օրհնաբան,
Նոյ-Նահապետ աստվածատես՝ ածուներիդ վեհ այգեպան,
Մանուկներիդ ու կույսերիդ արյան հնձան, ի՛մ Հայաստան:
Արդարախոս ու մեծասքանչ քո հին լեզվով օրհներգված,
Լուսավորչի լույս կանթեղով երկինքներըդ լուսերանգված,
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած,
Հրաշափառ քո Հարությամբ՝ նորամանուկ ի՛մ Հայաստան:

1921 թ., Վենետիկ

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

Մեղքը սրա–նրա վրա բարդելով ջվալը չի կարվում: Ազգովի կդառնանք մեղադրող, պահանջող, վատաբանող, ճառ ասող... Ճա՛ռ ասող: Մեր զանգն ո՞վ է կախելու:

Մեր խոսքը մտածմունքից ծնենք, մեր կողմնորոշումը՝ տանջահար մեր պետությունից: Խելոք մի մարդ ասել է՝ քաղաքականությունը հնարավորության արվեստ է: Թեթևամտորեն չկապկենք սրան–նրան, ուրիշ է մեր ճակատագիրը, այլ են մեր լուծելիք խնդիրները, ծանր է մեր խաչը:

Հեշտ ենք կորցնում, դժվար ենք ետ բերում տանուլ տվածը:

Կողքից նայողը կասի՝ հայերը արդեն քանի դար պատրանքներով են ապրում: Պատճառն այն է, որ հաճախ ենք ուրիշի ցեռքին խաղալիք եղել: Մի հինավուրց ժողովուրդ, փորչված, ծեծված մի ժողովուրդ ժամանակն է, որ իր եղած բարեմասնություններին գումարի իմաստություն:

Մեր վիճակը դեռ չի հասել գիտակցության մեր խորքերը:

Մեր ապագան բզկտված, չարչրկված այս փոքրիկ հողակտորն է, մեր միակ հույսն է, խնայե՛նք: Խնայենք ինքներս մեզ, խնայենք մերկացած ջղերով այս ժողովրդին: Մտավորականի համար չի կարող լինել՝ վերևի–ներքևի կողմ: Հայրենիքն ամբողջական հասկացողություն է:

Գալիք փոխակերպումներին ընդառաջ...

➢1 կան հետաքրքրություն է առաջացնում, այլև մի շարք հիմնախնդիրների կիրառական լուծումներ կարող է առաջադրել,-ասաց ռեկտորը: Իսկ այս ոլորտում մեզ հետաքրքրող հիմնախնդիրները բավականին լայն են ու բազմաշերտ թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ կոնցեպտուալ, թե՛ սոցիալ-մշակութանական, թե պետահիրավական առումներով»:

Ռեկտորն ընդգծեց՝ Հայոց եկեղեցու, համահայկական հասարակական-քաղաքական կառույցների, հայկական մշակույթի, հայ ինքնության, հայության աշխարհընկալման, Հայոց ցեղասպանության և հայկական պետականության հանդեպ մեր ընկալումների հարափոփոխ ընթացքի ուսումնասիրությունն ու գնահատումը և՛ արդիական է, և՛ գնահատելի, որը հնարավորություն կտա առավել պատրաստ դիմագրավել գալիք փոխակերպումներին:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց սփյուռքում միակ հայ բարձրագույն կրթօջախի՝ Հայկազյան համալսարանի անձնակազմին՝ 70-ամյակի առթիվ, և մաղթեց բազում կրթական ձեռքբերումներ, որոնք հետագայում էլ կվկայեն Հայկազյան համալսարանի տեղը համաշխարհային կրթական ոլորտում, միաժամանակ մարտահրավերներով լի այս աշխարհում մաղթեց մարդկային երջանկություն և առողջություն:

Ելույթ ունեցավ Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ վերապատվելի Փոլ Հայտոսթյանը, որն անդրադարձավ անցյալի 120 տարիների փուլերին՝ կարևորելով մի քանի հարցեր. «Հայկական տեղաշարժերի ու փոխակերպումների ընթացքի մեջ պետք է դիտարկել և գնահատել հայի շրջապատի տեղաշարժերը, նրանց ազդեցությունը հայերի վրա, այդ փոփոխությունները կարող են բերել ոչ միայն ձեռքբերումներ, այլև կորուստներ, հետևաբար դրանց դիմակայելու համար անհրաժեշտ է հայկական ինքնաճանաչումը:

Տեղաշարժերի պատմությունը պետք է դիտարկել նրա պատմական խոր արմատներով՝ չանտեսելով խորքային նշանակությունը:

Քաղաքական աշխարհը պետք է իր ռազմավարությունը հարմարեցնի ժողովրդի պատմական հիմքերին:

Մեր անվտանգության, հզոր պետականության, ազգային ինքնության, կրթական համակարգի, ռազմական, լեզվական, բարոյական, ընկերային, տնտեսական և մյուս կարևոր ոլորտների զարգացմանը նպաստելու ռազմավարության մշակման պատասխանատուն պետությունն ու սփյուռքն են, վերջինս նաև պետք է երաշխավորի ընդհանրական հայկականության գոյությունը:

Գիտաժողովներում պետք է հստակ եզրակացություններ ու առաջարկներ անել, պատմությունից դասեր քաղելու ընթացքին ցուցաբերել նոր մոտեցումներ՝ չսահմանափակվելով ներկա պայմաններով»:

Դոկտոր Փոլ Հայտոսթյանը լիահույս է՝ այսօր կանք, որովհետև կանգնած ենք արժեքավոր դարավոր մշակույթի, քրիստոնեական հավատքի, պատմության ամուր հիմքերի, փորձի, նաև ծանր վիճակների փորձի վրա, և բոլորս պարտավոր ենք շարունակել այդ ընթացքը՝ առանց ընկրկելու և նախապայմաններ դնելու: Վերապատվելի դոկտորը նկատեց՝ աշխարհը հսկայական տեղաշարժերի մեջ է, իսկ մեր հայրենիքն ու սփյուռքը հաճախ իրար դասեր են տալիս: Մեր ժողովուրդը անսակարկելի նվիրումի կարիք ունի. մենք պետք է սովորենք անցյալից և հասկանանք՝ ինչպիսի ապագա ենք ուզում կերտել Հայաստանի և ողջ հայության համար:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան էդգար Հովհաննիսյանն ընդգծեց. «Նման միջոցառումները ոչ միայն գիտական արդյունք են ստեղծում, այլև Հայաստան-Սփյուռք հարաբերությունների մի փոքր պատմական էջ են գրում: Երբ չորս տարի առաջ սկիզբը դրվեց այս համագործակցության, մտածում էինք՝ այնպիսի թեմա, որն ավանդական հայ պատմագիտական ուղղություններին ավելացնի ևս մեկ նոր հետազոտական ասպեկտ: Մենք հասկացանք, որ ժամանակները փոխվում են, և կարիք կա նոր մոտեցումների ու մեթոդաբանության անգամ հայտնի փաստերի ու իրադարձությունների նկատմամբ:

Ժողովածուի մեջ տեղ գտած հոդվածները, անշուշտ, վերջնական խոսք չեն այդ բնագավառում, մերօրյա լույսի ներքո այդ փոխակերպումների ուսումնասիրությունն անհրաժեշտություն է: Այդ առումով դաշտը բացթողում ունի, և մեր հարևան ոչ բարեկամ ժողովուրդները, մեր պետությանը և ժողովրդին մարտահրավեր նետող ուժերն այդ վակուումը լցնում են սեփական պատմագիտական կեղծ թեզերով, որոնք հետագայում դառնում են հղման աղբյուր, և արդյունքում, պատմագիտական մրցակցության մեջ, մեր տեղը զիջում ենք: Այդ իմաստով այս հատորը որոշակի առաքելություն ունի, որը հարթակ դարձավ՝ կամրջելու հայաստանյան և սփյուռքյան պատմագիտական հանրությանը»,-ասաց դեկանը:

Էդգար Հովհաննիսյանը կարևորեց երկու համալսարանների համակարգային համագործակցությունը, քանզի 70-ամյա Հայկազյան համալսարանի հետ համագործակցությունը պատիվ է բերում Մանկավարժական համալսարանին, և պատիվ է նաև այս օրերին հոբելյանի շրջանակում Մանկավարժականում ներկա հոդվածների ժողովածուի շնորհանդեսի կազմակերպումը:

Դոկտոր Անդրանիկ Դաքեսյանին է պատկանում աշխատանքի առյուծի բաժինը և նրա բծախնդիր ու պահանջկոտ ջանքերի արդյունքում է նաև իրականացվել այդ ամենը:

Դոկտոր Անդրանիկ Դաքեսյանը անհրաժեշտություն համարեց և կարևորեց վերջին 120 տարվա թեմատիկ խնդիրների դիտարկումն ու քննարկումը ժամանակային դիպաշարում:

«Ճիշտ է, այդ արդյունքներից բավարարված չենք և փորձում ենք երրորդ գիտաժողովը հրավիրել, որպեսզի առկա հնարավորությունները ավելի լավ ծառայեցնենք բուն և ռազմավարական նպատակներին: Այս գործակցության մեջ կար վստահություն, որովհետև կողմերը նույն տեսլականով էին ճամփա ելել»,-ասաց Անդրանիկ Դաքեսյանը՝ շնորհակալություն հայտնելով հաճելի փոխվստահության և գործակցության համար:

«Այսօր մարդկությունը ոչ թե տգիտության քաոս է ապրում, այլ աժեհամակարգերի քաոս: Առաջացել են մարդկային փոքր կղզյակներ, որոնցից յուրաքանչյուրը գոյացել է ըստ որոշ արժեհամակարգի: Մեր մաղթանքն է, որ Մանկավարժական և Հայկազյան համալսարանների միացյալ ուժերով հրատարակված այս հատորի մեջ խտացած յուրահատուկ կղզյակ արժեհամակարգն ու ոգին կարողանան հաղթահարել արցախյան աղետի հանդեպ մեր ցավը՝ դառնալով հայ իրականությունն առավել բարելավող հավելյալ զորավոր գործոն»,-ամփոփեց բանախոսը:

Սա ոչ միայն համագործակցություն է երկու համալսարանների միջև, այլև օրինակ՝ ինչպես կարող են համագործակցել հայրենիքն ու սփյուռքը և ցանկալի արդյունքի հասնել՝ եզրափակեց պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը՝ վստահեցնելով, որ հայրենիքն ու սփյուռքը մեկ են՝ իրար փոխլրացնող:

Միլվա ԱՍՐՅԱՆ

«Արհեստական բանականությունն ու կրթությունը»

Հունիսի 16-20-ը էրազմուս+ շարժունության ծրագրի շրջանակում Իսպանիայի Ռովիրա և Վիրջիլի համալսարանում անցկացվեց «Արհեստական բանականությունն ու կրթությունը» խորագրով միջազգային ծրագիրը:

ՀՊՄՀ-ից մասնակցում էին Օտար լեզուների ուսուցման և Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների դասախոսներ Մարգարիտա Հակոբյանն ու Գոհար Նահապետյանը:

Ծրագիրը նախաձեռնել էր Ռովիրա և Վիրջիլի համալսարանի Արհեստական բանականության կիրառմամբ մեթոդաբանական նորարարությունների ցանցը: Նպատակն էր համաշխարհային բուհերի դասախոսների և աշխատակիցների համար ստեղծել դինամիկ և համագործակցային հարթակ՝ ԱԲ կիրառմամբ կրթության նոր ուղիներ բացահայտելու, cutting-edge գործիքների ու լավագույն փորձի միջոցով արհեստական բանականությունը կրթական գործընթացներում ինտեգրելու, ուսումնասիրելու և քննարկելու բարձրագույն կրթության ոլորտում ԱԲ-ի իրավական և էթիկական դրսևորումները, փորձի փոխանակման և կապերի ձևավորման միջոցով խթանել միջազգային համագործակցությունը:

Միջազգային ծրագրին մասնակցում էր աշխարհի 18 երկրի շուրջ 27 մասնակից. նրանք իրականացրին փորձի փոխանակում, քննարկեցին մարտահրավերներն ու ապագայի հնարավորությունները՝ կրթության մեջ ԱԲ ինտեգրման համատեքստում:

ՀՊՄՀ դասախոսները ներկայացրին «Արհեստական բանականությունը որպես

ուսուցողական օգնական. գործիքներ ինֆորմատիկայի և լեզվի դասավանդողների համար» թեման:

Այցի շրջանակներում ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեցան նաև ծանոթանալու իսպանական Տառագոնա քաղաքի պատմամշակութային հարստությանը՝ կրթական փորձառությունը համադրելով մշակութային ճանաչողականությամբ:

Հիշեցնենք, որ Ռովիրա և Վիրջիլի համալսարանի հետ ՀՊՄՀ-ն համագործակցել է էրազմուս+ կարողությունների զարգացման BOOST ծրագրի շրջանակում, ինչի արդյունքում ընդլայնվել է կառույցների գործակցությունը:

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ Իսպանիայի Վալյադոլիդի համալսարանում

Հունիսի 16-19-ը Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի գլխավորությամբ, Իսպանիայի Վալյադոլիդի համալսարանում էր:

Էրազմուս+ T4GREEN (Հայաստանում և Մոլդովայում մանկավարժական կրթության բարեփոխումը հանուն կանաչ և թվային անցման) ծրագրի շրջանակներում բուհի Կրթության և Սոցիալական աշխատանքի ֆակուլտետը վերապատրաստման և փորձի փոխանակման նպատակով հյուրընկալել էր ծրագրի մասնակից համալսարանների և կազմակերպությունների ավելի քան 40 ներկայացուցչի՝ Հայաստանից, Մոլդովայից, Չեխիայից և Պորտուգալիայից:

Ի դեպ, ՀՊՄՀ-ն Էրազմուս+ T4GREEN (Հայաստանում և Մոլդովայում մանկավարժական կրթության բարեփոխումը հանուն կանաչ և թվային անցման) ծրագրի համակարգողն է:

Վերապատրաստման առաջին օրը մասնակիցներին ողջունեցին Վալյադոլիդի համալսարանի Կրթական նորարարության և թվային վերափոխման գծով պրոռեկտոր Սյուզանա Ալվարեսն ու VirtUVa-ի տնօրեն (Վալյադոլիդի համալսարանի առցանց ուսուցման, վերապատրաստման և կրթական նորարարության կենտրոն) Ռութ Պինեդո Գոնսալեսը:

Ծրագրի համակարգող, ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն իր ելույթում ընդգծեց T4GREEN-ի կարևոր դերը Հայաստանի և Մոլդովայի կրթական համակարգերի զարգացման գործում: Նա իր երախտագիտությունը հայտնեց Վալյադոլիդի համալսարանին՝ վերապատրաստման շաբաթը բարձր մակարդակով կազմակերպելու, ծրագիրն արդյունավետորեն իրականացնելու համար:

Վերապատրաստման առաջին օրը շարունակվեց խմբային աշխատանքներով. հաշվի առնելով, որ ծրագրի կարևորագույն վերջնարդյունքը գործընկեր համալսարաններում ԲՏՃՄ, օտար լեզուների և հատուկ կրթության ուղղությամբ ծրագրերի վերանայումն է հանուն կանաչ և թվային անցման, համալսարանների հետ քննարկվեցին այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Այցի երկրորդ օրը խմբային աշխատանքներ եղան թվային և կանաչ անցման գործնական մեթոդների շուրջ, ինչին հաջորդեց «PROMISED» նախագծի փորձի վերաբերյալ դասախոսությունը:

Այցի շրջանակներում մասնակիցները եղան նաև Սեգովիա քաղաքում, որտեղ գտնվում է Վալյադոլիդի համալսարանի Կրթության ֆակուլտետի կամպուսը: Սեգովիայի համալսարանի աշխատակիցները ներկայացրին ուսուցիչների պատրաստման լավագույն փորձը՝ համահունչ 21-րդ դարի պահանջներին և զարգացումներին:

Վերապատրաստման վերջին օրը եղան քննարկումներ, ծրագրի ընթացիկ արդյունքների գնահատում:

Ծրագրի արտաքին գնահատող, Ստոկհոլմի թագավորական տեխնոլոգիական համալսարանից Վիկտոր Կորդասը ներկայացրեց վերջին 18 ամիսների ընթացքում ծրագրի արտաքին գնահատման արդյունքները, հանդես եկավ առաջարկներով:

Այցն ավարտվեց ծրագրի համակարգման վերաբերյալ հանդիպմամբ. ամփոփվեցին վերջին ամսիներին իրականացված աշխատանքները, պլանավորվեցին հետագա գործողությունները:

Մարինե ԱՂԵԿՅԱՆ

Երբ կարևորվում են գիպեմիքն ու հմտությունը

Ցանկանում ենք կիսել մեր դրական կարծիքն ու ոգեշնչումը՝ մեր հարազատ բուհի՝ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում բացված և ակտիվ գործող Գերազանցության կենտրոնի՝ տեխնիկապես հագեցած լաբորատորիաների հետ կապված: ՀՊՄՀ-ի «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի 3-ին և 12 -ին իր հյուրընկալ դռներն էր բացել ՀՀ տարբեր մարզերի և Երևանի մի շարք դպրոցների աշխարհագրության ուսուցիչների առջև: Ուսուցիչների մեծ մասը, ինչպես նաև մենք Մանկավարժականի տարբեր տարիների աշխարհագետ շրջանավարտներն են: Միշտ պահել ենք գործնական կրթական կապերը մեր բուհի հետ, իսկ այս նորաստեղծ լոբորատորիայում աշակերտների և մեզ համար կազմակերպվող դասերն ու սեմինար քննարկումներն ավելի են ամրապնդում ու նոր որակ հաղորդում դպրոց-բուհ, ուսուցիչ-մանկավարժական համայնք կապերին:

Հանդիպումների ընթացքում ծանոթացանք Գերազանցության կենտրոնի աշխարհագրության լաբորատորիայի նորագույն սարքավորումներին, մասնավորապես՝ եղանակային դիտումների համար նախատեսված դպրոցական օդերևութաբանական տեղակայանին, քարտեզագրական մի շարք գործիքների՝ կուրվիմետր, կողմնացույց և այլն, որոնք կիրառվում են տեղանքում կողմնորոշվելու, քարտեզների, հատակագծերի և գլոբուսի վրա կորագծերի երկարությունների չափման համար: Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիետա Մուրադյանը, դոցենտ Սամվել Կրոյանն ու ամբիոնի ասիստենտ Վարդուհի Հովհաննիսյանն ուսուցիչների համար անցկացրին վարպետության գործնական դասեր՝ նորաստեղծ լաբորատորայի ժամանակակից սարքավորումների կիրառմամբ:

Փորձառու շատ ուսուցիչներ հանդիպումների ընթացքում կիսեցին իրենց փորձը, կատարվեց մտքերի և գաղափարների ակտիվ փոխանակում, բուհից հեռացանք՝ վստահ լինելով, որ նման հարստացնող հանդիպումները կլինեն շարունակական:

Սիրով և հարգանքով՝
Անուշ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան № 147 դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի
Իրինա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի աշխարհագրության դասախոս

Երբ ցուցահանդեսի «գլխավոր կերպարը» ծաղիկն է...

«Ծաղիկներ, որ չչորացան» խորագիրը խորհրդանշում է արվեստի հավերժությունը, հիշողության, զգացողության և գույնի տևականությունը ստեղծագործության մեջ. Մանկավարժական համալսարանի ռեկտորատի սրահում հունիսի 25-ին բացվեց մանկավարժ գեղանկարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սևադա Սարգսյանի 12-րդ անհատական ցուցահանդեսը՝ «Ծաղիկներ, որ չչորացան» խորագրով:

Ինչպես նշում է Սևադա Սարգսյանը, ցուցահանդեսն իր 30 տարվա ստեղծագործական կյանքի անդրադարձն է: Ներկայացված 30 աշխատանքները խորհրդանշում են տարիների ընթացքում կուտակված ստեղծագործական փորձը, տարբեր զգացողություններն ու ոճային պրպտումները:

Սևադա Սարգյանը ցուցահանդեսում ներկայացրել է իր 30 տարվա 30 առաջադրանք, որտեղ պայմանական «կերպարը» ծաղիկն է: Այստեղ ներկայացված են և՛ 1995, և՛ 2025 թվականին նկարված ծաղիկներ: Հարցին, թե ոճային կամ զարգացման ինչ տարբերություններ է նկատում հեղինակը, պատասխանեց. «Ես ինքս էլ նոր եմ նկատում: Թեև այս ծաղիկները առանձին տեղերում են եղել կամ իմ արվեստանոցում, բոլորն էլ անընդհատ աչքիս առաջ են եղել, բայց միասին չէի տեսել: Նաև իմ ստեղծագործական աճն եմ նկատում այստեղ: Եզրակացությունս եղավ ցուցահանդեսի խորագիրը՝ «Ծաղիկներ, որ չչորացան»: Յուրաքանչյուր ծաղիկ իր ժամանակի տպավորությունն ու զագացողությունն է հիմա ինձ փոխանցում, և յուրաքանչյուր ծաղկի հետ կարծես թե վերադառնում եմ տվյալ ժամանակաշրջան: Ինքնագնահատման առիթ է նաև այս ցուցահանդեսը, և կարևորում եմ նաև այն, որ այստեղ բացի գեղարվեստական մոտեցումից, կա մեթոդաբանություն՝ ինչպես կարելի է ցուցադրել, ինչ կարելի է ցուցադրել»:

Սևադա Սարգսյանը մատնանշում է իր քանդակները՝ մետաղյա ծաղիկներ, որոնք ևս հնարավոր է «քաղել» (նրանք եռակցված կամ սոսնձված չեն):

Նկարիչը ուշադրությունը կենտրոնացրել է նաև ցուցադրման մեթոդաբանության վրա, ինչպես օրինակ, մետաղյա ծաղիկը, որ ստեղծվել է 2025-ին, ամենավերջին աշխատանքն է: Այն յուրատեսակ արևածաղիկ է, որը սակայն թեքվում է ոչ թե դեպի արևը, այլ նայում է երկնքին: Աշխատանքը նվիրել է զոհված տղաների հիշատակին: Սևադան հող է բերել այն վայրից, որտեղ նահատակվել է մեր բուհի ուսանող Աժդահակը, և ծաղկի վրա հատուկ շրջանակ կա արված, որտեղ պետք է լցնի այդ հողը՝ որպես հավերժության խորհրդանիշ:

ՀՊՄՀ պրոֆեսոր Սևադա Սարգսյանի ցուցահանդեսը ներկայացնում է մեկ մարդու կյանքի անցած ճանապարհը՝ ծաղիկների լեզվով, ծաղիկներ, որոնց մեջ նա նաև խորհրդանշաններ է տեսնում: Ճանապարհ՝ ծաղկի լեզվով, ասել է թե ներկայացնել՝ ինչպես է մարդը, ստեղծագործողը ժամանակի մեջ փոփոխվում, ինչպես է ենթարկվում բնությանը, կամ բնության թելադրանքով ինչպես են ծնվում ստեղծագործություններ:

«Պատահական չէ, որ ծաղիկների թեման նկարիչների գործունեության մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում,-ասաց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:- Ծաղիկը այն պարզագույն և շքեղ երևույթն է, որ յուրաքանչյուրիս կյանքին նոր գույն, նոր գիտակցություն, նոր տրամադրություն է բերում, այն նկարչի՝ օբյեկտիվ իրականության հետ փոխներգործելու յուրահատուկ միջոցն է: Ուրախ եմ, որ այսօր Գեղարվեստական կրթության ֆակուլտետի պրոֆեսոր Սևադա Սարգսյանի տրամադրությունների, խնդիրների, ժամանակաշրջանում իր գտած գույների և այդ հայտնագործությունների մեջ հոգեկան ռեսուրսը մեզ հետ կիսելու հնարավորություն է ընձեռնվել»:

Ռեկտորը խոսեց Սևադայի վաղ շրջանի ստեղծագործությունների մասին, որոնցում նկատելի է երիտասարդական գույների ընկալման պարզությունը և հանգիստ ու խաղաղ տրամադրությունների դրսևորումները, ինչպես նաև ապագայի նկատմամբ ջինջ պատկերացումները: Սրբուհի Գևորգյանը միաժամանակ ընդգծեց ավելի ուշ շրջանում ստեղծված աշխատանքներում նկատվող կտրուկ փոփոխությունները՝ արտահայտված շարժումն ընդգծող վրձնահարվածներով, որոնց միջոցով հեղինակը փորձել է մեզ փոխանցել ոչ միայն իր ներքին մտորումները, այլև տվյալ պահի խնդրահարույց իրավիճակները ու տրամադրությունը:

«Այստեղ ներկայացված են աշխատանքներ, որոնք խոսում են ծաղկի հավերժության, կյանքում ծաղկի՝ մեզ հետ ներգործելու հավերժական հարցադրումներին մոտենալու մասին: Որ ոլորտն էլ վերցնենք՝ ծաղկի գոյությունը մեր կյանքում յուրահատուկ նշանակություն ունի, մնացածը ճաշակի, ըմբռնման, տրամադրության հարց է»,-ասաց ռեկտորը՝ փաստելով, որ ծաղիկներ խորհրդանշող ցուցահանդեսը լավագույն նվեր է նաև համալսարանի շրջանավարտներին:

Ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը, որը Սևադայի աշխատանքները բնորոշեց որպես ասելիք ունեցող ստեղծագործություններ, ընդգծեց նկարներում «թաքնված» լույսի առկայությունը՝ ասելով՝ «սա երկարատև մտորումի և աշխատանքի արդյունք է»:

Գործընկերոջ մանկավարժական և ստեղծագործական գործունեությունն արժևորեցին նաև մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Արտաշես Քեշիշյանը և կերպարվեստի ամբիոնի դոցենտ Միսաք Մելքոնյանը:

Օրվա «մեղավոր» Սևադա Սարգսյանը խոսեց ցուցահանդեսին իր ուրույն մոտեցման մասին. ներկայացրել է ծաղկի կերպարը, թե ինչ փոփոխությունների է ենթարկվում ժամանակի ընթացքում, իր դեպքում՝ 30 տարվա կտրվածքով, ինչ փոփոխության են ենթարկվում ծաղկի ընկալումը, ծաղկի կերպարի ձևակերպումները: Միաժամանակ նա ընդգծեց ցուցահանդեսի առանձնահատկությունը՝ ներկայացված են տարբեր ոճերով, տարբեր նյութերով ու տեխնիկաներով արված աշխատանքներ:

Պետք է շարունակեմ նկարել ծաղիկներ՝ ամփոփեց Սևադան՝ հույս հայտնելով, որ բնության մեջ անընդհատ փնտրելու է այն հավերժական ծաղիկը, որը հավերժ է նաև նկարներում, և միգուցե կգտնի:

Ստեղծագործողի ճանապարհը ամենօրյա տառապանք է, նաև՝ յուրաքանչյուր ստեղծագործության հետ ծնվող ապրումն ու ընկալումը դիտողին ճիշտ մատուցելու զգացողություն: Սևադա Սարգսյան ստեղծագործողի ճանապարհն էլ բացառություն չէ... Մաղթենք նրան «ծաղկային» նոր ճանապարհ՝ իրեն բնորոշ՝ մութի խորշից դեպի լույսն ու արևը ձգվող գունեղ վրձնահարվածներով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



ՀԻՇԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՊԱՐՈՆ ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԻՆ

Դիմատետրը բանալս եւ Պարոն Դաւիթ Գուրջինեանի գուժը դէմս ելլելը մէկ եղաւ. «…Աւարտուեց Լալիկ Խաչատրեանի երկրային կեանքը: Ափսո՜ս, հազար ափսոս….»: Քամուած մնացի տեղս. ափսոսանքի ահաւոր բան մը պատեց ներսս. ը՜ւր գնաց, այդ մտքի հսկայ պաշարը, ո՜ւր տարաւ: Ու այդ վայրկեանէն մտքիս կպչեցաւ գրաբարի սորված առաջին տողս. «Որսորդն կալաւ կաքաւ մի, եւ կամէր զենուլ...»: Թերեւս տարիներ է, որ զայն չէի յիշած. հիմա ուղեղս բացուած արխիւ մը՝ մտքիս հին յուշերը մէկիկ-մէկիկ կը սահեցնէ ներսիդիս:

Գրաբարեան հատուածներ գոց արտասանել կու տար: Խիստ ու հեղինակաւոր շուք մը ունէր, այն աստիճանի որ դասարանին մէջ միշտ պէտք էր որ շունչդ պահած նստէիր, որովհետեւ չէիր գիտեր, թէ ո՛ր պահուն կրնար անունդ տալ, որպէսզի կրկնէիր օրինակ. «Որսորդն կալաւ կաքաւ մի, եւ կամէր զենուլ.

Մի՛ սպանաներ զիս, զի ես խաբեցիս զբազում կաքաւս եւ ածիս յակնատս քո»:

Վա՜յ անոր, որ սխալէր. այնքան սրամիտ ու ծիծաղելի բան մը կ'ըսէր, որ ամօթէդ՝ ո՛ւր մտնելդ չէիր գիտնար: Ուրեմն՝ կատակ չկար. պէտք էր սորվիլ...

- Դուք մեր ուսանողներից շատ լաւ էք կարդում գրաբարը,- կը հաստատէր ան եւ կ'աւելցնէր,- Մեր ուսանողները «յառաջ»-ի «յ»-ն «յ» են կարդում՝ ճիշդ այո-ի «յ»-ի նման: Դժուարութիւն ունին նաեւ երկբարբառները հնչելու՝ «ոյ, իւ, եա...»:

Այնուհետեւ կը սկսէր քերականական բացատրութեան.

«Կալաւ»՝ «ունիմ» անկանոն բային անցեալ կատարեալն է, այստեղ՝ բռնեց իմաստով:

«Կամէր»՝ «կամիմ», կամենալ բային անցեալ անկատարն է՝ «կ'ուզէր» իմաստով:

Միտքը կը նմանէր փոթորկոտ գետի, որ զօրաւոր հոսքով կը քշէր ու կ'երթար՝ մեզ թողելով լարուած, արագընթաց հոսքին ետեւէն հասնելու յոյսով:

Անգամ մը շատ անսպասելի հարցուց թէ՝ անառակին արմատը ի՞նչ է.

-Առակ, -պատասխանեցի գոհունակ:

-Իսկ անառակին եւ առակին կապը ո՞րն է:

-Տարակուսեցայ: Գիտէի, որ առակը այլաբանական ստեղծագործութիւն է, սակայն անառակ որդիի պատմութեան մէջ ան-առակը առակին հետ կապ ունէ՞ր, վստահ չէի:

Ու սրամտութեան փայլով բացատրեց, թէ առակները ինչու ստեղծուած են, անոր կերպարները մարդոց օրինակ դառնալու համար, ուրեմն՝ ան-առակ կը նշանակէ ան - օրինակ, իսկ «օրինակ» բառի արմատն ալ օրէնն է, օրէնքը: Այս տրամաբանութեամբ ալ անառակը օրէնքէն շեղողն է:

Հազիւ տրամաբանած, փութացուց յաջորդը. «Իսկ խայտառա՞կը»:

- Խայտ -առակ,- կ'ըսեմ առանց երկուքին կապը հասկնալու:

Իսկոյն բացատրեց, որ ժամանակին անառակներու, այսինքն օրէնքները խախտողներուն կամ կը գամէին անարգանքի սիւնին եւ կամ դէմքին բիծեր կը գծագրէին եւ կը ցուցադրէին հրապարակները իբր ծաղրի առարկայ, խայտ կը նշանակէ գոյնզգոյն բիծեր, հոնկէ ալ՝ խայտառակը:

Այսպէս՝ բառերը ստուգաբանելու հաճելի մտամարզանք կ'ընէինք, ան կը վարժեցնէր մեզ խորհելու ու բառերուն վրայէն անտարբեր չանցնելու:

Մատենագրութիւն ալ կը դասաւանդէր պարոն Լալիկը: Ագաթանգեղոսը, Եզնիկ Կողբացին, Փաւստոս Բիւզանդը, Եղիշէն, Խորենացին՝ իր խօսքին ու առոգանութեան շնորհիւ կը կենդանանային: Արտաշէսը կը քաշէր իր պարանը, ու կ'անցընէր Սաթենիկի մէջքին ու շատ կը ցաւեցնէր մէջքը փափուկ օրիորդին: Յետոյ, կ'աւելցնէր՝ ժպիտով.

-Իմ աղջկան անունն էլ է Սաթենիկ:

Վարդանանքի յիշատակի ամիսն էր: Համազգայինի կազմակերպած դասախօսական երեկոյին պարոն Լալիկը պիտի ներկայացնէր «Աւարայրի ճակատամարտը»: Ինչպէս այլ ուսանողներու, ինծի եւս վիճակուեցաւ արտասանել: Իմ բաժինս Վարդանի ճառն էր.

«Արդ, աղաչեմ զձեզ, ով քաջ նիզակակիցք իմ...»:

Շատ կը սիրէի մանաւանդ գրաբարեան հնչեղութիւնը ճառի հետեւեալ հատուածին. «Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն…» իրար յաջորդող հնչիւններ, որոնք կը ստեղծեն յատուկ երաժշտութիւն՝ շեշտադրելով տողերու ուժը, խորհրդաւորութիւնն ու գեղեցկութիւնը:

Սիրահարեցայ գրաբարին, որուն հանդէպ մինչ այդ երկիւղ ունէի, չէի մօտեցած: Հիմա, որ կը կարդայինք ու կը թարգմանէինք հատուածներ՝ լեզուի արմատին կը դիպչէինք: Ինչպիսի՜ երանութիւն: Այդ օրերուն հայագիտականի լեզուի երկու մեծ դասախօսներ ունենալը բախտաւորութիւն էր՝ արեւմտահայերէնի մեր դասախօսը՝ պարոն Չոլաքեանն էր, գրաբարինը՝ պարոն Լալիկը: Մենք իսկապէս բախտաւոր սերունդ էինք:

Անցան տարիներ: Հալէպը ապրեցաւ պատերազմի ծանր տարիներ: Եւ օր մը, երբ ընտանեօք որոշեցինք Հայաստան տեղափոխուիլ, իմ առաջին քայլս եղաւ Հայագիտական ուսումս շարունակելը: Մագիստրատուրայի տարիներն էին: Երկրորդ տարիս էր, երբ դասախօսներու ցանկին մէջ կարդացի պարոն Լալիկի անունը: Ան մեզի այդ կիսամեայ լեզու պիտի դասաւանդէր: Շատ ուրախացայ ու անհամբեր կը սպասէի մեր հանդիպումին:

Դասարան մտնելն ու դասի անցնիլը մէկ եղաւ: Հարցումներ ուղղեց, եւ լսարանի ուսանողները մէկիկ-մէկիկ սկսան պատասխանել: Ժպիտով եւ ներքին հրճուանքով կը հետեւէի դասախօսիս. չէր փոխուած, նոյն եռանդը պահած էր եւ նոյն սրամիտ ոճով կա՛մ կը համաձայնէր ուսանողներուն պատասխաններուն, կա՛մ կը ճշդէր: Հարցումի մըն ալ ես պատասխանեցի՝ ամչկոտութենէս ձեռքս չբարձրացուցի, այլ նստած տեղէս՝ ոչ այնքան համարձակ ձայնով: Պահ մը կատարեալ լռութիւն տիրեց ու յետոյ հարցուց.

- Ո՞վ էր:

-Ես,- պատասխանեցի: Զգացի, որ ձայնս ծանօթ թուեցաւ իրեն, բայց ակնյայտ էր, որ չէր պատկերացներ, թէ իր դիմաց նստած ուսանողը տարիներ առաջ Հալէպի մէջ իր դասընթացքներուն մասնակիցներէն մէկն էր: Իսկոյն անունս հարցուց, եւ երբ տուի, անակնկալի եկաւ. «Ձայնդ էլ չես հանում հա՜», ըսաւ ու դասը ընդհատելով սկսաւ ուսանողներուն պատմել Հալէպի հայագիտականի օրերէն այնպիսի մանրամասնութիւններ, որոնք ձեւով մը վերապրում եղան նաեւ ինծի համար:

Դասաւանդութիւնը արեւելահայերէն էր, սակայն իմ ներկայութիւնս առիթ համարելով իւրաքանչիւր լեզուական երեւոյթի կամ օրէնքի դիմաց, կ'ուզէր որ արեւմտահայերէնի ալ համեմատականն ընէի: Քննութիւնս ալ այդպէս յանձնեցի արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի համեմատութեամբ:

Դժուար է ընդունիլ պարոն Լալիկին կորուստը: Մարդ, որ հզօր գիտելիքներով դեռ շատ բան ունէր տալու յաջորդ սերունդներուն: Դիմատետրի էջին պարոն Դաւիթ Գուրջինեան հաւաստիացուց, որ պիտի շարունակեն իր գործը ու աւարտին հասցնեն գիտաժողովի գիտական նիւթերու ժողովածուն, որուն առաջին էջին ցաւով պիտի զետեղեն «Խօսք Յիշատակի»:

Յարգանք իր վաստակին:

Սօսի Միշոյեան ՏԱՊՊԱՂԵԱՆ

ՎԵՀԱՄՈՐ ԱՎԵՏԱՐԱՆ

Հայկական ձեռագրական ժառանգության արժեքավոր մատյաններից է հնագրությամբ VII դար հասնող Ավետարանը, որը հայտնի է «Վեհամոր Ավետարան» անունով (ՄՄ 10680): Այն մեզ հասած հայերեն հնագույն ամբողջական ձեռագիրն է: Մատյանը մագաղաթյա է, գրված բոլորագիծ երկաթագրով, 33ճ25,7 սմ մեծությամբ, ունի 256 թերթ: Գլխավոր հիշատակարանը չի պահպանվել՝ թերթն ընկած լինելու պատճառով: Ուստի, անհայտ են ձեռագրի գրիչը, գրչության վայրն ու ստույգ ժամանակը: Տարբեր ձեռագրերով գրչությունը ցույց է տալիս, որ Ավետարանը գրվել է երկու գրիչների կողմից՝ (առաջին գրիչը գրել է 1-121 թերթերը, երկրորդը՝ 122-256): Մատյանը չունի նկարազարդում, սակայն առանձնանում է հնագրական առանձնահատկություններով. վաղ շրջանի վիմագրերից ու հնագույն ձեռագրական պատառիկներից հայտնի տառաձևերով կատարված նրա երկաթագիր գրչությունն ինքնին տպավորիչ է: Ավետարանն ունի կաշվե կազմ, այն կոստղազարդ է, կենտրոնում մեծ ոսկեջրած խաչ՝ ընդելուզված հինգ կիսաթանկարժեք քարերով, իսկ չորս կողմից՝ տասնհինը արծաթյա փոքր խաչերով:

Ըստ հետագայի հիշատակարանների՝ XIII դարում Ավետարանը պահվել է Հավուց թառի վանքում: Այստեղ 1294 թվականին ձեռագիրը անձնական միջոցներով ձեռք է բերել Ամենավագ անունով պատվական քահանան և կազմելու է տվել կազմարար Գևորգին: Այդ մասին հիշատակարաններ են թողել և՛ Ամենավագ քահանան, և՛ Գևորգը:

Հետագայի մյուս բոլոր հիշատակարանները դարձյալ Ավետարանի դեգերումների մասին են. XV դարում Ավետարանը գտնվել է Մաքենյաց վանքում, իսկ XVI դարից սկսած՝ Մեծ Բանանց գյուղում, որտեղ արդեն երկու անգամ նորոգված մատյանը (1453 թ. և 1511 թ.) 1625 թվականին երրորդ անգամ գյուղացիների միջոցներով նորոգել է Հովհաննես երեց Շատախեցին՝ հիշատակարանում այն անվանելով «Ծեր Ավետարան»: Բանանցի բնակիչները հետագայում մատյանը «Պահապան» կամ «Բանանցի Ավետարան» են անվանել, որովհետև հավատում էին, որ Ավետարանն ունի բուժիչ և խնդրակատար ուժ: Ավելի ուշ մատյանը տարվել է Գանձակի Ս. Գրիգոր եկեղեցի, որտեղից էլ Գանձակի Հայոց թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տերյանը բերել է Ս. Էջմիածին և նվիրել Ամենայն Հայոց հայրապետ Վազգեն Առաջինին: Վազգեն Վեհափառը, մեծապես արժևորելով Ավետարանը, 1975 թվականի հուլիսի 25-ին այն նվիրում է Մատենադարանին՝ ի հիշատակ իր մոր՝ 1974 թվականին մահացած Սիրանուշ Պալճյանի, որի համար մատյանն ստանում է **«Վեհամոր Ավետարան»** անունը:



Ավետարանը բացառիկ է նաև նրանով, որ երդմնակալության ժամանակ Հայաստանի Հանրապետության նախագահները երդվում են այդ Սուրբ մատյանի վրա:

Թամարա ՄԻՆԱՍՅԱՆ

Մատենադարանի ավագ գիտաշխատող, Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայ-հունական համագործակցություն կրթական ոլորտում

Էրազմուս+ շարժունության ծրագրի շրջանակում Մանկավարժական համալսարանում էին Աթենքի «Պանթեոն» քաղաքական և հասարակագիտական գիտությունների համալսարանի ներկայացուցիչները՝ Քաղաքագիտության և պատմության բաժնի պրոֆեսորներ Քրիսուլա Միցոպուլուն, Այկատերինի Պապամելետին, ինչպես նաև Հանրային կառավարման բաժնի պրոֆեսոր Էվանջելիա Պլեմմենուն: Կրթական կառույցները համագործակցում են նախորդ տարվանից:

Հանդիպման ընթացքում հայ և հույն գործընկերները միմյանց ներկայացրին կրթական հաստատությունները, գործունեության հիմնական ուղղությունները, գործող մասնագիտությունները, կրթական համակարգի առանձնահատկությունները:

Կողմերը նաև կիսեցին միջազգային ոլորտում իրենց փորձառությունը, հանդես եկան հնարավոր համագործակցության վերաբերյալ առաջարկներով:

Հանդիպմանը ներկա էին նաև Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության ուսանողներ Ալեքսիա Մնացականյանն ու Հասմիկ Ավագյանը: Վերջիններս Էրազմուս+ շարժունության ծրագրի շրջանակներում կրթությունը շարունակելու հնարավորություն են ունեցել Աթենքի «Պանթեոն» քաղաքական և հասարակագիտական գիտությունների համալսարանում: Նրանք իրենց ուսումնառության վերաբերյալ փորձն ու կրթական համակարգում առկա տարբերությունները ևս ներկայացրին:

Ստեղծագործական երեկո՝ «Իմ ուսուցչին»

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում հունիսի 21-ին ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Լիլյա Խաչատրյանը հանդես եկավ իր ուսուցչին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար, հասարակական գործիչ Աննա Ալեքսանդրի Ամբակումյանի 105-ամյակին նվիրված համերգով: «Իմ Ուսուցչին» ստեղծագործական երեկոն Կոնսերվատորիայի դահլիճում հավաքել էր երաժշտության ոլորտի մասնագետների ու երաժշտասերների, դասախոսների և ուսանողների:

Ծրագրում հնչեցին դասական դաշնամուրային և վոկալ ստեղծագործություններ: Լիլյա Խաչատրյանը Կոմիտասի, Բախի, Բեթհովենի, Շոպենի դաշնամուրային ստեղծագործությունների բարձր կատարողական արվեստով հիացրեց դահլիճում ներկա գտնվողներին՝ փաստելով, որ ուսուցչին արժանի աշակերտ է, և այսօր՝ ինքն է շատերի ուսուցիչը:

Վոկալ ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկան Տաթևիկ Մովսեսյանը և Ռուբեն Կարասեֆերյանը (ՀՊՄՀ): Նրանք կատարեցին Լիլյա Խաչատրյանի գրած երաժշտությամբ և հանրահայտ հեղինակների ստեղծագործություններ:

Երեկոն վարում էր ինքը՝ Լիլյա Գուրգենովնան, որը ներկաներին հետ տարավ դեպի իր ուսանողական տարիները, վերհիշեց ճանաչում ունեցող բազմավաստակ դասախոսներին, որոնց պարտական է իր կրթության համար, խոսեց նրանց մասնագիտական ու դասավանդման փորձառությունից:

Դահլիճը հոտնկայս ծափահարություններով ընդունեց դաշնակահարի նախաձեռնությունն ու ելույթը՝ փաստելով, որ ուսուցիչներին հիշելու և մեծարելու լավագույն օրինակը նման ստեղծագործական երեկոների կազմակերպումն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Համերգային հանդիպում Մանկավարժականում

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Լևոն Կոջոյանի անվան ցուցասրահում տեղի ունեցավ համերգ-հանդիպում ամերիկահայ կոմպոզիտոր, դաշնակահար, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Մարի Սարգյան-Չինկեզյանի հետ:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Անահիտ Գևորգյանի և Մարի Սարգյան-Չինկեզյանի առցանց հանդիպումներից է ծնվել համագործակցությունը և հունիսի 17-ին Մանկավարժական համալսարանում կայացած համերգ-հանդիպումը:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, երաժիշտներ, երաժշտական դպրոցների ուսուցիչներ, բանաստեղծներ, Մարի Սարգյան-Չինկեզյանի ուսանողական տարիների ընկերներ, համալսարանի դասախոսներ և ուսանողներ:

Համերգ-հանդիպումը վարում էր Անահիտ Գևորգյանը, որը հանրակրթական դպրոցական երաժշտության դասագրքերի հեղինակ է:

Մշակութային գեղեցիկ միջավայրում ամերիկահայ կոմպոզիտորը դաշնամուրով կատարեց իր հեղինակային երգերից, որոնց մի մասը զետեղվել է երաժշտության դասագրքերում: Մարիի երգերը կատարեցին տարբեր դպրոցների և երաժշտախմբերի մասնակցող փոքրիկներ, դաշնամուրային նվագակցությամբ հանդես եկան երաժշտական մանկավարժության ամբիոնի մագիստրատուրայի ուսանողներ:

Ամերիկահայ կոմպոզիտորը խոսեց իր ծննդավայր Այնթափի և արմատների մասին, պատասխանեց ուսանողների հարցերին, հանդես եկավ ներկայացվող երգերի մասին հետաքրքիր պատմություններով:

Կոմպոզիտորը 40 տարի ապրում է Լոս Անջելեսում և երազանք է ունեցել ամուսնու հետ այցելել ծնողների ու տատիկ-պապիկի ծննդավայր Այնթափ, գտնել հարազատներին, բայց անակնկալ կերպով միացավ Լոս Անջելեսի Մարի Մանուկյան դպրոցի աշակերտ թոռնիկին, որը Երևան էր գալիս իր մի քանի դասընկերների հետ: Դաշնակահարը ներկայացրեց, որ ինքը և իր երեք թոռնիկները մշտապես կապված են հայրենիքի հետ:

Եվ ահա երաժշտական դասագրքերի հեղինակ, ՀՊՄՀ դոցենտ Անահիտ Գևորգյանի հետ նախաձեռնեցին այս համերգային հանդիպումը:

Մարին Հայաստանում ավարտել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը, որտեղ ուսանել է անվանի երաժիշտ Էդուարդ Բաղդասարյանին, ապա կրթությունը շարունակել է Կոմիտասի անվան կոնսերվատորիայում՝ ուսանելով ճանաչված դասախոս երաժիշտ Գրիգոր Եղիազարյանին:

Հենց Անահիտ Գևորգյանի հորդորով էլ ինքը մի քանի երգեր է գրել Հայաստանի երաժշտական դասագրքերի համար:

Ներկաները փոքրիկների կատարմամբ ըմբոշխնեցին ամերիկահայ կոմպոզիտոր Մարի Մարի Սարգյան-Չինկեզյանի «Սեպտեմբերի 1», «Պիտի ընկերանանք», «Ով եմ ես», «Ընկեր» և մյուս մանկական երգերը իր և Մանկավարժական համալսարանի ուսանողների դաշնամուրային նվագակցությամբ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Երբ ներսումդ գարուն է

Հայաստանյան գարունները պարզապես եղանակ չեն: Դրանք հիշողություն են, սրտի անդորրի ու փոթորկի սահմաններին՝ երբեմն մեղմ քամու պես շոյելով, երբեմն ցավի անսպասելի սուրալով մտնելով ներս, երբեմն էլ ժպտալով՝ մանկության բույր բերելով հետ: Դրանք ոչ միայն հուշեր են, այլ ապրումներ, որ դաջված են հոգուդ պատերին: Գարունը գալիս է լռությամբ՝ լուռ, բայց խորքեղեն ներկայությամբ: Նա չի գոռում, չի շեփորահարում իր վերադարձը: Նա խոսում է միայն նրանց հետ, ովքեր ապրում են այս հողի շնչով, այս հողի ծմակների լռությամբ, գյուղական այգիների ցողաթաթախ առավոտներով: Գյուղերում՝ պապիկների ու տատիկների ձեռքերում, հողն է արթնանում, կարծես նրանց ափերն են վերածնում նրան: Այգիներում ծիծեռնակները՝ տուն դարձած հույսի հյուլեներ, նորից սկսում են բույն հյուսել, իսկ քաղաքում՝ վազքի ու աղմուկի մեջ էլ կյանքը սկսում է զարկերակել՝ կարծես ձմռան քնից արթնացած շնչառություն լինի: Մարդիկ ավելի մեղմ են թվում. երջանկությունն այս եղանակի հետ գալիս է հաճախ անուշ, աննկատ, բայց ներսից փոխող:

Եվ ես երջանիկ եմ, որ ծնվել ու մեծացել եմ մի քաղաքում, որն իր խոհերում ու բակերում գյուղի ջերմությունն էր պահել: Այստեղ տարիների բոլոր եղանակները հյուսվում էին մի զարմանալի ամբողջության մեջ, բայց գարունը՝ կրկնակի կարևորված: Հայ գարունը ոչ միայն անցյալ է, այլև՝ բանաստեղծություն: Հիշողություն, որով մենք ծնվում ու ապրում ենք՝ թեկուզ չգիտակցելով: Բայց միևնույն ժամանակ՝ հայ գարունը խոստում է: Խոստում, որ ցավի գիշերը լույս ունի, որ վերքը կարող է ծաղկել, որ մենք ինքներս կարող ենք մեզ բուժել: Ամեն նոր օր հայացք է դեպի այն ապագան, որը ժառանգել ենք մեր արմատներից ու մագաղաթագիր ենք դարձնում մեր երազներով: Երբ գարունը գրկում է հողը, թվում է՝ ամբողջ աշխարհը մի պահ կանգ է առնում՝ տեսնելու, թե ինչպես է մի փոքրիկ երկիր այսքան թովիչ կերպով վերածնվում: Այդ գարունները մեզ հիշեցնում են, թե ով ենք մենք՝ մի ժողովուրդ, որ չի մոռանում իրեն, չի կորչում, այլ վերագտնում է ծառի ամեն ծաղկած ճյուղի մեջ: Գարունը վերապրում է՝ ամեն ցրտից հետո: Դա պապիկի ձեռքով տնկած ծիրանենին է, որ դեռ ծաղկում է՝ նրա բացակայության մեջ: Դա մայրս է՝ պատուհանի մոտ կանգնած՝ հայացքն այն ճանապարհին, որտեղ ես մանկական ոտնահետքեր էի թողնում: Դա այն փողոցներն են՝ որոնք մենակ իմ լուռ ու աղմկոտ օրերին կանգնած են եղել կողքիս՝ անգիր անելով ինձ: Դա ես եմ: Ես ծնվել եմ գարնանը, կյանք եմ բերել նրանց, ովքեր սպասում էին ինձ, և գուցե փոթորիկ դարձել նրանց համար, ովքեր երբեք չիմացան, որ իմ մեջ խաղաղություն կար: Երբ փոքր էի, մայրիկն ինձ «գարուն աղջիկ» էր կոչում: Հիմա եմ հասկանում՝ ինչու: Հիմա եմ հասկանում այդ անվան խորքը: Ես գարուն եմ՝ ապրում են իմ ներսում բոլոր եղանակները, բայց երբեք չեմ պարտվում ձմռանը, երբեք չեմ հալչում առանց հետք թողնելու: Եվ հիմա, երբ հեռու եմ ամենաթանկերից, սիրտս լուռ կարոտների մեջ եմ պահում՝ զգում եմ՝ դրսի եղանակը շատ քիչ բան է ասում: Եթե ուզում ես, որ ներսումդ գարուն լինի՝ լինում է: Եթե խաղաղություն ունես՝ ոչ մի փոթորիկ չի կարող քեզ ցնցել: Ես էլի նույն Մարին եմ՝ երբեմն ջերմություն, երբեմն կրակ: Երբեմն լույս, որ լուսաբացին է արթնացնում, երբեմն մթություն, որ հանգիստ քնեցնում է հոգնած հոգին: Եվ գարունները միշտ են գալիս: Որպես հիշեցում, որ կյանքը չի վերջանում, երբ սառն է դառնում: Որպես ապացույց՝ որ ծմեռները միշտ նահանջում են... իսկ մենք՝ վերածնվում ենք:

Մարի ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

Անտեսանելի պատերազմը

21-րդ դարն իր հետ բերում է նորանոր հնարավորություններ՝ տեղեկության արագ տարածումից մինչև տարբեր ոլորտների թվայնացում: Այս թվային հարմարավետության խորքում թաքնված է լուրջ, բայց հաճախ անտեսված մի վտանգ՝ կիբերպատերազմը: Սա սպառնալիք է, որի դեմ զենքերով պայքարել հնարավոր չէ:

Կիբերանվտանգությունը պարզապես մասնագիտական եզրույթ չէ: Այն մեր կյանքի մասն է: Ամեն օր, երբ մուտք ենք գործում էլեկտրոնային փոստ, օգտագործում ենք բանկային հավելվածներ, առցանց գնումներ ենք կատարում, շփվում ենք սոցցանցերում՝ դառնում ենք թվային աշխարհի մասնակից և միևնույն ժամանակ՝ թիրախ:

Այսօր հաքերների թիրախում են հայտնվում ոչ միայն անհատ օգտատերերը, այլև ֆինանսական և տնտեսական կարևոր ենթակառուցվածքները: Սա պարզապես տեխնոլոգիական խնդիր չէ, այլ բոլորիս անվտանգությանը սպառնացող վտանգ:

Ապագան թվային է՝ արհեստական բանականություն, նորագույն տեխնոլոգիաներ: Որքան զարգանում է աշխարհը, այնքան ավելի բարդ է դառնում վերահսկողությունը: Պաշտպանվելու մի ճանապարհ կա՝ կրթություն:

Կիբերպատերազմը տարբերվում է ավանդական պատերազմներից. այստեղ չեն հնչում կրակոցներ, չկա զորք, չկա սահման: Այստեղ ,զենքերըե կոդերն են, ալգորիթմները, զինվորները՝ հաքերներն ու ծրագրերը:

Բայց մի գործոն նույնն է մնում՝ մարդը, որ 2 դեր ունի՝ և՛ հարձակվողն է, և՛ զոհը:

Եթե դու ապրում ես թվային աշխարհում՝ արդեն այս պատերազմի մեջ ես: Թեև այն չի աղմկում, բայց իրական է՝ վտանգավոր ու աղետաբեր:

Միակ իրական զենքը, որ ունենք՝ գիտելիքն է:

Երջանկության շեմին կոնֆետներ բաժանելիս...

Անձրև էր տեղում: Սովորությանս համաձայն անձրևանոց չէի վերցրել, չեմ սիրում, նախընտրում եմ թրջվել: Նայում եմ շուրջբոլորս, մարդիկ բոլորն իրենց քայլերն արագացնում են, քանի որ անձրև է, իսկ ես քայլում եմ դանդաղ, ինձ համար անձրևը երբևէ ամենասիրելի երևույթներից մեկն է: Ու հանկարծ հասկացա, որ երջանիկ եմ, չէ, չեմ ուզում խենթի տպավորություն թողնել, իրոք երջանիկ եմ, և հանկարծ գիտակցեցի՝ ամեն մեկը յուրովի է երջանիկ: Երջանկության վերջ, սկիզբ, մտքերս խառնվում են իրար, կարո՞ղ են զգացմունքները ակիզբ և վերջ ունենալ, գլխումս կռիվ է, մտածում եմ մի բան և նույն պահին հակառակվում ինքս ինձ: Չէ, ամեն դեպքում երջանկությունը սկիզբ չունի, այն ուղղակի կա, մեկը լացում է, երբ տանը չեն պատրաստել իր սիրած ուտեստը, իսկ մյուսը երջանիկ է, երբ տեսնում է, որ տանը հաց կա, մեկը բողոքում է, որ թեյը շատ քաղցր է և չի պատրաստվում այն խմել, իսկ մյուսը երջանիկ է, երբ ուղղակի այդ օրը կոնֆետ կերավ: Կոնֆետ... ճիշտ է, պայուսակումս կոնֆետ ունեմ:

Երբ փոքր էի, մտածում էի՝ երջանկությունը բարձրաձայն մի բան է: Ինչ-որ մի օր պիտի փայլատակի դիմացս՝ հրավառությունների ու ծափերի ուղեկցությամբ: Բայց հետո կյանքը սկսեց մանրանալ՝ օրերի, վայրկյանների, հայացքների մեջ: Ու ես հասկացա՝ երջանկությունը գալիս է մեղմորեն՝ ինչպես արևը՝ պատուհանից, երբ լուսավորում է նոր պատրաստած թեյս:

Չեք մոռացել, չէ՞, այն կոնֆետի մասին: Չնայած որ առավոտից ոչինչ չէի հասցրել ուտել և հիշում էի պայասկումս ունեցած շոկոլադի մասին՝ մտածելով, որ այն շուտով կուտեմ, մտափոխվեցի, որոշեցի այն տալ անծանոթի՝ դրսում մրսած ծերունու... Ես սպասում էի, որ նա կժպտա, շնորհակալություն կհայտնի, հնարավոր է՝ նույնիսկ հուզվի: Բայց նա ուղղակի վերցրեց կոնֆետը, ակնդետ նայեց ինձ ու ասաց. «Քեզ այսօր հաստատ ինչ-որ բան կուրախացնի»:

Չգիտեմ՝ դա մարգարեությո՞ւն էր, թե՞ պատահական խոսք, բայց այդ օրվանից սկսեցի միշտ մի քանի կոնֆետ պահել պայուսակում: Դրանք բաժանում էի՝ առանց ակնկալիքի: Ու տեսա՝ որքան ուժ ունի մի փոքր, քաղցր ժեստը:

Երջանկության շեմը տեղում կանգնած երջանկությանը սպասելը չէ: Երջանկությունը ստեղծում ենք մենք և տանում այն մեզ հետ, երբ քայլում ենք մարդկանց կողքով ու ընտրում՝ խոսե՞լ, թե՞ լռել, նայե՞լ աչքերի մեջ, թե՞ հեռու: Իսկ երբ գալիս է պահը՝ ընտրելու, ես միշտ հիշում եմ այդ խոսքերը՝ քեզ այսօր հաստատ ինչ-որ բան կուրախացնի:

Եվ հենց այդ պահին՝ ուրախությամբ լցված հոգուս պատճառով տաքացած ձեռքերիս մեջ կոնֆետների հալվելուն պես, ինքս եմ հալվում՝ մի փոքր ավելի բարի դառնալով: Երջանկության շեմը կոնֆետներ բաժանելը չէ: Կոնֆետներ բաժանելը երջանկության արարումն է:

Էլմիրա ՇԵԼՈՒՆՑ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանող

Արգիշտի Պետրոսյանը հետաքրքիր երիտասարդ է, ստեղծագործ միտք ունի, լավ գրիչ, նաև ուժեղ կամք: Նա ընդունվեց Հայկական պետական մանկավարժական համալսարանի լրագրության բաժին և անմիջապես զորակոչվեց բանակ: Նա չէր ուզի ու հատկապես չէր պետկերացնում, որ իր առաջին նյութերը կլինեն ռազմական գործողությունների մասին: 2023 թվականի սեպտեմբերի 12-ը նրա հուշերում կմնա այնպես, ինչպես ինքն այդ օրերին արձանագրել է: Արգիշտիի վավերագրությունը ներկայացնում ենք առանց խմբագրման:

Վաղը պատերազմ էր...

2023 թվականի սեպտեմբերի 12:

Ժամը 23:50: 157 մարտական դիրքի դիտակետ,

2-րդ հերթափոխ: Երկխոսություն շարքային Արգիշտի Պետրոսյանի և շարքային Վարդան Առաքելյանի միջև:

-Չես խոսում Արգիշտ: Քեզնից չի: Ի՞նչ ես մտածում:

-Կամանդիրի ցերեկվա պահվածքը տարօրինակ էր: Ոնց որ մի բան հասկացներ:

-Չէ հա: Դժվար: Միշտ էլ նույնն ա: Գալիս ա տենց ա անում, որ արխային չընկնենք, ամեն վայրկյան սպասենք ու պատրաստ լինենք կռվի:

Վարդանը չգիտեր, որ ես ու կամանդիրը առանձին էլ ենք խոսել: Ու ես ավելի շատ բան գիտեմ, քան իրենք: Իրենց իմացածիս կեսն եմ ասել, որովհետև մյուս կեսը ասելու դեպքում խուճապը շարքից կհաներ բոլորին:

Ես Արգիշտին եմ: Արդեն մեկ ու կես տարի է ծառայում եմ Գորիսում: Շարքային եմ, բայց որպես լավ զինվոր, ներքին կարգով, նաև դիրքումս «հրամանատարություն եմ» անում: Ու հենց սա էր պատճառը, որ ցերեկը կամանդիրը իմ հետ էր առանձին խոսել: Ասաց, որ հակառակորդի մոտ աննախադեպ կուտակումներ կան, ու ամեն ինչ խոսում է էն մասին, որ գիշերը հարձակում կլինի, բայց տղաներին ուղիղ չասեմ: Կվախենան, կզանգեն, հեռախոսով բաներ կխոսեն, որն անթույլատրելի է: Փորձեմ ուղղակի հասկացնել ու հոգեպես պատրաստել:

Մեկը լիներ՝ ինձ հոգեպես պատրաստեր:

Երևի կյանքումս առաջին անգամ պատասխանատվության անտանելի մեծ չափաբաժին զգացի ուսերիս: Մի քիչ վախ կար: Բայց իմ համար չէ, այլ տղաների: Մենք արդեն կես տարի միշտ նույն ջոկով էինք դիրքեր բարձրանում, ու ընտանիքը ամենահարմար բառն է բնութագրելու համար մեզ, մեր հարաբերությունները:

Սեպտեմբերի 13: ժամը 00:00:

-Արգիշտ, դրոնի ձեն ա:

-Դրոն չի, դրոններ են...

-Հ՞ն...

Ձանգ Կամանդիրին:

-Կամանդիր, դրո...(չհասցրի ավարտեմ նախադասությունը):

-Գիտեմ: Սկսվում ա....

Ու մի պահ կանգնեց ամեն ինչ: Աշխարհը, ժամանակը: Սառեց հայացքս մի ուղղությամբ ու հենց այն ուղղությամբ, որում կարմիր կետը դանդաղ գնաց, խփեց ու սնկաձև կրակով վեր հանեց մեր 161-րդ դիրքի տնակը....

-161-ին խփին, Արգիշտ: Տղերքը:

-Տեսնում եմ: Պառկիր, հեսա հերթը մեզ էլ կհասնի: Տագնապ: Մեր մնացած տղաները բարձրացան մեզ մոտ ու...

Գնաց...

Դրվեց կյանքիս, չեմ վախենա ասել, ամենակարևոր 72 ժամի սկիզբը: Գոռում էինք, կռվում, կատակում անդադար, ծիծաղում, մրսում՝ շատ ու հատկապես ես: Վերարկու չէի հագել դիրք բարձրանալիս, չգիտեի, որ մինչև լուսադեմ էլ տնակ չեմ իջնի: Պայքար էր: Ինքնամոռաց պայքար:

Ամբողջ կյանքիդ հիշողությունները, ամեն երկինքը կեղտոտող պայթյունին զուգահեռ, բարևում էին ուղեղիդ ծալքերին:

Ձգում էի մարմնիս ամեն մասը:

Ձոհ... Գրիգորը զոհվեց ներքևի դիրքում... Վարդանի մոտ ընկերն էր: Ընկերներ չէինք, բայց մոտ էինք:

Փրկեցինք... Հպարտ եմ: Անհամեստություն թող դիտվի: Հպարտ եմ ինձնով, որովհետև մարդկային կյանք եմ փրկել. 4 կյանք...

Հայրս եկել էր... 2 օրից ավելի կռվին հետևում էր գյուղից ու չէր կաողանում գալ ինձ մոտ: Չէին թողնում: Կյանքում առաջին անգամ երկուսս էլ հասկացանք ու իրար խոստովանեցինք... Հպարտ էր, որ առանց իր օգնության միայնակ չտրտնջացի, դիմացա, կարողացա... Հպարտ եմ, որ հպարտ էր...

Սեպտեմբերի 16: Ժամը՝մոտ 18:00:

Ռացիայի մեջ լսվեց. «Հրաման կա չկրակելու. հրադադար է»: Գնդապետն էր:

Վերջացավ:

Թվում է, թե հիմա ավելի շատ ասելու բան պիտի ունենամ, բայց ոչ: Պառկեցի: Նայեցի կապույտ, պարզ ու մաքուր երկնքին: Չխոսեցի: Լուռ մտածեցի: Շնորհակալ եմ, ունեցածիս, չունեցածիս համար: Շնորհակալ եմ ինձ բացահայտելու, ինքս իմ հետ ծանոթանալու, ուժեղ կողմերս իմանալու համար: Շնորհակալ եմ այն ամենի համար, որ հիմա չեմ հիշում: Ու վերջում: Խոստանում եմ...

Խոստանում եմ պատվով օգտագործել ապրելու իմ երկրորդ շանսը այս աշխարհում...



Արգիշտի ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ Հեռուստառադիոլրագրության բաժնի
3-րդ կուրսի ուսանող

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2025-2026 ուսումնական տարվա ասպիրանտուրայի առկա ընդունելություն

1. Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01 (1 տեղ)

2. Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ըստ բնագավառների) - ԺԳ.00.02 (1 տեղ)

3. Սոցիալական հոգեբանություն - ԺԹ.00.03 /1 տեղ/

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

4) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը,

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. հունիսի 2-ից մինչև 27-ը:

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ս.թ. հուլիսի 2-ից մինչև 11-ը:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2025/2026 ուսումնական տարվա հայցորդական (հետբուհական) կրթության ընդունելություն (վճարովի հիմունքներով)

Հայցորդական /հետբուհական/ կրթության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:

2.Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

3. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները:

4. 2 տպագրված հոդված կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ:

5. 3 լուսանկար (3x4 չափի):

6. Ինքնակենսագրություն (CV):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև ս.թ. նոյեմբերի 3-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն՝ 206 սենյակ, հեռ՝. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ